workers united

An SEIU Affiliate

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ-SEIU ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ԼՈԳԻՍՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Միավորված աշխատողներ-SEIU կազմակերպությունը ներկայացնում է բաշխման և լոգիստիկայի հազարավոր աշխատողների, որոնք կազմում են մեր անդամության ամենամեծ միավոր հատվածի 23%-ը, և

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ բաշխումը և լոգիստիկան ԱՄՆ տնտեսության ամենաարագ աճող սեկտորներից են, որտեղ պահեստային և պահուստավորման հատվածում (NAICS՝ Հյուսիսային ամերիկայի արդյունաբերության դասակարգման համակարգ, 493) չվերահսկվող աշխատանքների թիվը գրեթե կրկրնապատկվել է նախորդ տասնամյակի ընթացքում, և որի կտրուկ աճ վերստին ակնկալվում է կորոնավիրուսի համավարակի արդյունքում ստեղծված տնտեսական գործունեության փոքր անկումից հետո,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ բաշխման և լոգիստիկայի պայմանները բարենպաստ չեն, այդ թվում՝ ժամանակավոր և գործակալությունների կողմից առաջարկվող աշխատանքները, ցածր աշխատավարձերը, քիչ թվով առավելությունները, անհարմար և անառողջ աշխատանքային միջավայրը, բարձր ճնշումը, հսկողությունը և սովորական դարձած անհարգալից ղեկավարումը,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ կորոնավիրուսի համավարակի արդյունքում ավելացել է բաշխման և լոգիստիկայի աշխատողների հանդեպ ճնշումը՝ հատկապես անձնական պաշտպանիչ միջոցների սղության և սոցիալական հեռավորության, ինչպես նաև վարակված դեպքերի թափանցիկության բացակայության պայմաններում, որոնք շատ աշխատողների մոտ առաջացնում են զայրույթի զգացում և աշխատանքի խաթարում,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ բաշխման և լոգիստիկայի կազմակերպումը կանգնել է մի շարք էական խոչընդոտների առջև, որոնցից կարևորագույններից է ժամանակավոր և գործակալությունների աշխատողների մեծ թիվը, աշխատողների շրջանառելիության բարձր ցուցանիշները, դժվարամատչելիությունը, 3PL՝ երրորդ կողմի լոգիստիկայի գործատուները, գործատուների կողմից ցուցաբերվող ինտենսիվ դիմադրությունը և չգործող NLRA-ը՝ Աշխատանքային հարաբերությունների մասին ազգային ակտը,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ ԱՄՆ-ում և Կանադայում բաշխման և լոգիստիկայի աշխատողների կազմակերպումը, նրանց մղած պայքարը՝ մանրածախ առևտրի գլոբալ մատակարարման շղթաների պայքարի հետ միասին, կարող են առաջ բերել հզոր հանրային արշավներ և SEIU-ի՝ որպես առաջնորդի և Միավորված աշխատողներ-SEIU -ի հանրային շարժման՝ ուղղված աշխատողների իրավունքներին, արդարությանը և արժանապատիվ աշխատանքային պայմաններին համընդհանուր հանրային պայքարում,

ՀԵՏԵՎԱԲԱՐ, ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՎԵՑ ԱՌ ԱՅՆ, որ Միավորված աշխատողներ-SEIU

կազմակերպությունը նախապատվություն կտա բաշխման աշխատողների կազմակերպմանը ԱՄՆ-ում և Կանադայում:

22 Էս. 22-րդ փողոց, Ֆիլադելֆիա, Փենսիլվանիա 19103, հեռախոսահամար՝ Ֆաքս՝ 646-448-6414 215-575-9065

www.workersunited.org 7 հուլիսի, 2020